ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» փետրվարի 2017թ. N 05

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2017թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2017թվականի ձմռան ամիսներին տեղացած ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը,գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով.

Կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Գ. Գաբրիելյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Ջրառ>> ՓԲԸ-ի տնօրենին / համաձայնությամբ/ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Հանձնաժողովին /Գ. Գաբրիելյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված ուսումնասիրությունները և աշխատանքները ավարտել մինչև 2017 թվականի փետրվարի 10-ը և կատարման մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը / պետ Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2017 թվականի փետրվարի 23-ի
N 05 կարգադրության

ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գաբրիելյան	Հայաստանի հանրապետության Արմավիրի Մարզպետի տեղակալ
Անդամներ՝- Ա. Այվազյան -	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Մ. - Սարիբեկյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
Ս.Մխիթարյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
Կ.Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
Գ.Մելիքյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությանվարչության բնապահպանության բաժնի պետ
Վ.Միրզախանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությանվարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությանվարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ